



## 54. ԽԵԼՔՆ ՈՒ ԲԱԽՏԸ

**Ժամանակով խելքն ու բախտը վիճեցին:**

Խելքն ասում էր, որ հինքն ա երգիրը կառավարում, որ եթե հինքը չըհընի, աշխարքն հիրար կըխառնվի, մարթիք հառաչվան նման կրդառնան վայրենի, էն ժամանակ էլ բախտի մասին մարթիք գաղափար չեն ունենա, բախտ ասած բանը գոյություն չի ունենա:

Բախտն էլ հիրա երթին ասում էր.—Ինչքա՞ն խելքով մարթիկա, որ բախտ չունի, հիրա խելքի ձեռը կրակ ա հընգե, տանջվում ա: Բախտ ունեցողն աբրում ա, անբախտը տանջվում ա:

Շատ վիճեցին, ետո որոշեցին մե մարթի վրա փորցեն:

Գացին, տեսան մե գեղացի վար ա անում:

Ասին.—Այ չթվոր, խելքն ա լա՞վ, թե՞ բախտը:

—Էրկուսը մե տեղ ունենալը լավ ա, —պատասխանեց էս մարթ, —Հընչի՞ եք խառցնում:

Բախտն ասավ.—Այ գեղացի, էրկուսը մե տեղ չի հընի, էս մարթը խելքն ա, ես՝ բախտը, հիմի կովում ենք, յոլա չենք էթում: Մեկս քեզի պտի օքտա, հիմի ո՞ր մեկիս ես ուզում, պա՛րդ ասա:

—Անխելք մարթը ինչի՞ պետք ա, այ բախտ: Անխելք մարթը չի խասկնա, թե բախտն ինչ բան ա, հըմա խելքով մարթը կը-խասկնա: Թո խելքը մտնի իմ գլոխը, բախտը էթա:

Էտ հրոպեին խելքը մտավ էս մարթի գլոխը, բախտը մնաց կայ-նուկ:

—Դե, քեզի բարի ճամփա, բա՛խտ, գնա դու էլ մտի՛ անխելք-ների գլոխը:

Բախտը սուսուփուս թողեց գնաց:

Որ խելքը մտավ էս մարթի գլոխը, մարթը մե հրոպե մտածեց ու եղները թողեց:

—Էս ի՞նչ եմ անում, էս լավ խողը վեսկով եմ վարում: Էքուց սեղը կըհընի, ցորենին կըճասկա: Էթամ հարևաններիս խետ հա-մաձայնվեմ, մե գութան լծենք, գութանով վարենք, մե օր մերը, մե օր էլ հիրանը, որ խացի տեր դառնանք:

Եզները տվեց հառեչը, էկավ տուն:

Կնիկն ասավ. —Ա՛յ մարթ, ի՞նչ ա պատահե, խիվա՞նդ ես, թե՞ո վեսկին կողրավ, հըլա վեռչինք ա, հընչի՞ էկար:

—Վեսկին էլ չի կողրե, ես էլ խիվանդ չեմ, —ասավ մարթը, —ու-զում եմ տեղը գութանով վարեմ, էտ խողն ափսոս ա՝ տանք վես-կու բերանը, —ասավ մարթը:

—Նո՞ր ես խելքի էկե, քանի՞ տարի ա ասում եմ, որ հընգերով գութան լծա', խողին լավ ըմբգ տուր:

Էս մարթի գնաց հարևան Հակոյի մոտ, համաձայնվան գութան լծել, օրը մեկի արտը վարել:

Էս մարթի կիսատը պրծան, գացին Հակոյի արտը վարին: Մնաց ցորենը կանանչավ, ետո խասավ:

Էն ինչ վեսկու վարածն ա, պոչուկ ու խոլորս ա բուս, էն ինչ գութանի վարածն ա, գալգալող ցորենը ճիթոեր ա:

Մարթը ասում ա. —Վայ, խելք, չանքի հիմի հուր իր գացե:

Էկավ քաղի ժամանակը, էտ գիշեր էնենց կարկուտ էկավ, ար-տը տափաղաղ արավ, մե խատ կոռութ կայնուկ չըթողեց: Հիշկաց տեսավ՝ բախտը կայնե, ծծղում ա, ի՞նչ ծծաղ, հոհում ա: Քարը վերցուց ու տվեց բախտի ճակատին:

—Ա՛յ ավագակ, ուրախացեր ես, գնա՛, պետք չես, հո ամեն տա-րի կարկուտ չի գա, հմա խելքս տեղին ա, էլի կըցանեմ: Դու իմ պաճառով սաղ ժողովրթի տունը քանդեցիր, կարկուտ բերիր, դու մեր թշնամին ես, գնա՛:

Բախտը ձեն չարավ, գնաց:

Մարթը բախտի հետկից ասավ. —Մեկ էլ որ էրևացեր ես, զլիստ կըջարթեմ: Ես քեզի չասի՞ էրկուսն էլ լավ են, դու հընչի՞ վատություն արիր:

Էտ օրվանից ա մնացել էն խոսքը, որ ասում են, թե՛ հիր բախ-տին քարով տվեց:

Մե անխելք մարթ էլ վար էր անում: Բախտը որոշեց հակառակ խելքովի, որ բախտին քարով տվեց, սրան զարցնա հարուստ մարթ: Վարելու ժամանակ վեսկու խոփը դեմ առավ մե բանի: Անխելքը եզներին զոռ արավ: Դու մի ասա, խոփի ծերը հընգել էր դազանի կանթը: Որ զոռ արավ, եզներն էլ լավ եզներ, քաշեցին, քաշեցին, զազանը խանեցին: Ի՞նչ զարմանք: Ղազանը լինքը բոկյանտ, ոս-կի, թանգաղին քարեր, արևի տակը հազար գույնի լուս են տալում: Նստե էս անխելքը, աշկերը չոե ու ըստոնցն ա թամաշա անում: Լուսը գնաց հընգավ հարևանի հարդի վրա: Էս խելքովը մտածեց. «Էթամ, մե տենամ է զանմազն ի՞նչ ա անում, էս ի՞նչ ա էսենց փելքատում ու հազար գույնի լուս տալում»:

Գնաց, որ կանթերով ղազանը տեսավ լինքը, զարմացավ, էս մարթին խառցուց. —Էսքանը ի՞նչ ես անելու, ա'յ հարևան:

—Ի՞նչ եմ անելու, հընչի՞, զլոյսս հո դառտակ չի, տանեմ տամ թաքավորին, մե քիսիկ ոսկի էլ ա կըտա՞՝, կըբերեմ կաբրեմ, խելքս Հո խացի խետ չեմ կերել:

—Թաքավորի տունը ճանչնո՞ւմ ես:

—Զէ՛, որտեղի՞ց ճանչնամ, ես թաքավորի տո՞ւն եմ գացե՞:

—Դե բեր էստեղ պախենք, հէքուց իմ հարդը վերչացում, հիրար խետ տանենք:

Անխելքն համաձայնվավ:

—Հըմա ոչ մեկի բան չասես, —զգուշացրեց խելոքը:

—Ա'յ մարթ, Հո անխելք չեմ, հի՞նչ եմ ասում:

Գիշերը էս մարթը զնաց մե թուրք լայշի մոտ, հիրա պստի դազանին կանթ շինել տվեց, բերեց ըտու մեջը ոսկի լցեց, մե քանի խատ էլ բոկյանտ, մացածը տարավ հիրա տունը, պախեց:

Լուսը բացվավ, էկան խողը ետ տվին, դազանը խանին:

—Հարևան Սրբո, դազանը պստկցեր ա:

—Ս.... սս, —ասավ Սրբոն, —ձենը կէթա, կըխասնի թաքավորին, իմ գլոխն էլ կըկդրա, քոնն էլ. էս դազանն էր:

—Թաքավորի մոտը բան չըխոսաս, հա՞:

—Զէ՛, ա'յ մարթ, Հո խելքս չեմ թոցրե, ի՞նչ խոսամ:

Թաքավորը մտքումը շատ ծծղաց էս անխելքների վրեն, հըմա ոսկին ու բոկյանտը վերցուց, շնորակալ հելավ, ամենքին էլ մե քիսիկ ոսկի բախչեց:

Ըստոնք էլ թաքավորին շնորակալություն հայտնին, որ հիրանցը ոսկի տվեց ու գացին տուն: Ըստոնք որ գացին, թաքավորը մտածեց. «Ես ըստոնց խելքը չըփորցեցի, հըլա կանչեմ, մե փորցեմ»: Ետ կանչեց:

—Նստե՛ք, —ասավ թաքավորը:

Նստան:

—Ոսկի՞ն ա լավ, թե՞ բոկյանտը:

Անխելքն ասավ՝ ոսկին, խելքովն ասավ՝ բոկյանտը:

—Խե՞լքն ա լավ, թե՞ բախտը:

Անխելքն ասավ՝ բախտը, խելքովն ասավ՝ խելքը:

—Լո՞ւն է լավ, թե՞ մութը:

Անխելքն ասավ՝ մութը, խելքովն ասավ՝ լուսը:

Թաքավորն անխելքին ասավ. —Քո բախտը բերեց, ա'ո մե քիսիկ ոսկի, գնա՛:

Էս տղին խառցրեց. —Կնիկ ունե՞ս:

—Զէ՛, թաքավո՞րն ապրած կենա, չունեմ:

Անխելքը գնաց գեղը, ամեն բան պատմեց ու ծծղաց էն մարթի  
վրեն, որ ասում են, թե խելքով ա:

Թաքավորը էս խելքովին տարավ թաքուհու մոտ:

—Թաքուհի՛, էս տղեն շատ խելոք տղա ա, մեր ախճիկը տանք  
էս տղին: Կնիկ էլ չունի, ազաբ ա:

Թաքուհին ասավ.—Թաքավո՛ր, իրավունքը քոնն ա, ախճկան  
էլ կանչա՛, տե՛ս, թե համաձայն ա, նշանենք:

Կանչեցին ախճկան, որ տեսավ գեղացի զոռամամա տղին, քիչ էր  
մացե՛ ուշկն էթեր, ասավ՝ ես քոնն եմ, դու՝ իմը:

Էս տղեն մնացել էր զարմացած, բա՞խտը բերեց, թե՞ խելքը:  
Նշանվան, ետո օխտն օր, օխտը գիշեր խառնիս արին: Թաքավորի  
մեռնելուց ետո էլ էս տղեն թաքավոր դարցավ: Մե օր էլ բախտը  
կայնավ թաքավորի հառեցը:

—Տեսա՞ր, ես քեզի թաքավոր դարցրի:

—Զէ՛, —ասավ թաքավորը, —դու էն անխելքին էրկու քիսիկ  
ոսկով գլոխը եղեցիր, հըմա ես իմ խելքով թաքավոր դարցա:

Թաքավորը ծափ տվեց, էրկու դաշիճ ներս մտան:

—Տարե՞ք էս մարթին քցեք պալատի ամենամոտ բան-  
տը, —ասավ թաքավորը, —թո մնա պալատում:

Միյուս օրը թաքավորը գնաց բախտի մոտ:

—Ո՞նց ես, բախտ, դեղտ լավ ա՞:

—Է, ի՞նչ ասեմ, թաքավո՞ր:

—Ոչինչ էլ չես ասի: Ըստուց ետը դու կըմնաս էս պալատում  
որպես բախտ, ես էլ խելքով կըկառավարեմ, դու պտի խելքին  
ենթարկվես: Եթե դու ազատ մնաս, խելքով մարթկանց տները կը-  
քանդես:

